


Ա. Պ. ԶԵԽՈՎ

ՍՊԻՏԱԿԱԾԱԿԱՏԸ



ՊԵՏԼՐԱՏ




Ա. Պ. ԶԵԽՈՎ

ՄՏՈՒԳԼԵՎ Է 1967 Մ.

Ս Պ Ի Տ Ա Կ Ա Ճ Ա Կ Ա Տ Ը

ՅԱՐԿՄ.

ԱՆՈՂԻՏ ՆԱՎԱԿԱՏԻԿՅԱՆ
ՆԿԱՐՆԵՐԸ՝ Կ. ԿՈՒՉՆԵՑՈՎԻ



Պ Ե Տ Հ Ր Ս Տ

ՀԼԿՅՄ ԿԵ կից մանկապատանեկական գրականության բաժին
Յ Ե Ե Վ Ա Ն

1 9 3 3

1315

A $\frac{\pi}{24133}$

Խմբագրելը՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագրելը՝ Ստ. Ալբուխյան
Սրբագրելը՝ Ա. Արզախանյան





Սոված մայր — գայլը վեր կացավ, վոր գնա վոր-
սի: Նրա բոլոր յերեք ձագերն էլ, իրար կողքի կուշ
շեկած, պինդ քնած եյին և տաքացնում եյին միմյանց:
Մայրը լիզեց նրանց ու դնաց:

Արդեն գարնանային մարտ ամիսն էր, բայց գի-
շերները ծառերը ցրտից ճթճթում եյին այնպես, ինչ-
պես դեկտեմբերին: Յեւ յեթե լեզուդ դուրս հանելիք,
քուրտը կսկսեր ուժեղ կամթել:

Մայր — գայլը վատառողջ էր և կասկածամիտ:
Նա ամենափոքր չչուկից ցնցվում էր և միշտ մտածում
էր. չլինի՞ թե իր բացակայութեան ժամանակ վորևէ
մեկը նեղացնի ձագուկներին: Մարդկանց և ձիերի
հետքերի հոտը, կոճղերը, դարսված փայտը և աղբով
ծածկված մութ ճանապարհը վախեցնում եյին նրան:
Նրան թվում էր, թե ծառերի յետևը մթութեան մեջ,
մարդիկ են կանգնած և ուր վոր, անտառից դենը, շնե-
րը վրոնում են:

Նա արդեն յերիտասարդ չէր. հոտառութիւնը թու-
լացել էր: Պատահում էր, վոր աղվեսի հետքը շան
հետքի տեղ էր ընդունում, յերբեմն նույնիսկ հոտա-
ռութիւնից խաբված, ճանապարհից շեղվում էր:
Վ.յդ բանը նրան յերբեք չէր պատահում յերիտասարդ
հասակում: Թույլ առողջութեան պատճառով, նա
այլևս հորթերը և մեծ վոջխարներ չէր վորսում, ինչպես
առաջ, ձիերից ու քուռակներից հեռու յեր կենում և

կերակրվում եր միայն լեշերով: Մակալ եր պատահում »
փոր թարմ միս ուտեր: Միայն գարնանը, յերբ թա-
փառելով հանդիպում եր նապաստակի, խլում եր նրա
ձագուկները կամ մտնում գյուղացիների գոմերը, վոր-
տեղ գառներ կային:

Նրա վորջից չորս վերստ հեռու, փոստի ճանա-
պարհի մոտ, ձմեռանոց կար: Այդտեղ ապրում եր պա-
հակ Իգնատը, յոթանասուն տարեկան մի ծերուկ, վորը
միշտ հագում եր և ինքն իրեն խոսում: Սովորաբար նա
գիշերը քնում եր, իսկ ցերեկը մի փողանի հրացանը
ձեռքին թափառում եր անտառում և շվշվացնում,
վոր շները հարձակվեն նապաստակների վրա: Յերևի-
նա առաջ աշխատելիս ե յեղել իբրև մեքենագետ, վոր-
ովհետև ամեն անգամ, նախքան կանգ առնելը, գոչում
եր «կանգնի՛ր, մեքենա» և նախքան առաջ գնալը՝ «Թա-
փով առա՛ջ»: Նա ուներ մի ահագին, անհայտ ցեղի
սև շուն, Արապկա անունով: Յերբ շունն իրենից շատ
եր հեռանում, Իգնատը գոչում եր, «Յե՛տ դարձի՛ր»:
Յերբեմն յերգում եր և յերգելիս տատանվում և հա-
ձախ ընկնում (մայր—գայլը կարծում եր, վոր քամուց
ե որրվում) և գոչում. «Մեխերից դուրս յեկա»:

Մայրը — գայլը հիշում եր, վոր ամռանն ու աշնանը
ձմեռանոցի մոտ արածում էին մի վոչխար և յերկու
մատղաշ մաքի: Յեվ յերբ նա մոտ որերս վազելով անց-
նում եր այն տեղով, նրան թվաց, թե գոմում մա-
յրում են: Յեվ այժմ, մոտենարով ձմեռանոցին, գլխի
եր ընկնում, վոր արդեն մարտ ամիսն է, և նկատի
առնելով տարվա յեղանակը, գոմում պետք ե անպայ-
ման գառներ լինելին:

Մայր—գայլը տանջվում եր քաղցից, մտածում եր
թե ինչպիսի ազահությամբ կսկսի ուտել գառնուկին և
այդպիսի մտքերից նրա ատամները չխկչխկում, աչքե-
րը փայլում էին մթության մեջ, ինչպես յերկու ճրագ:

Իգնատի խրճիթը, սրահը, գոմն ու ջրհորը չըջա-
պատված էին բարձր ձյունակույտերով: Ծուրջը
լուռ եր: Արապկան, յերևի, սրահի մոտ քնած եր:

Մայր — գայլը ձյան կույտի վրայով բարձրացավ
գոմի կտուրը և սկսեց դնչով ու թաթով փորփրել ծղո-
տե կտուրը: Ծղոտը փխած եր և փափուկ, այնպես
վոր քիչ եր մնում գայլը ցած գլորվեց:


Հանկարծ նրա դնչին տաք գոլորչի դիպավ և գո-
մաղբի ու վոչխարի կաթի հոտ առավ: Ներքեում, ցուրտն
զգալով, գառնուկը մեզմ մայից: Անցքից թռչելով,
գայլն առջևի թաթերի վրա ընկավ և այդ ժամանակ
գոմում լավեց զիւ ճչոց, հաջոց, վոռնոց: Վոչխարները
նետվեցին դեպի պատը, իսկ մայր — գայլը, վախենա-
լով, բերանն առավ հենց առաջին պատահածն ու
դուրս պրծավ:

Նա վազում եր լարելով իր ուժերը: Այդ ժամանակ,
Արապկան զգալով գայլի ներկայութունը, կատաղա-
բար վոռնում եր, անհանգստացած հավերը կշիչում
եյին, իսկ Իգնատը դուրս գալով դռան առաջ, գոչում
եր. «Թափով առաջ, դեպի սուլոցը»: Նա սուլում եր
ինչպես մեքենա և հետո՝ հո՛ — հո՛ — հո՛ — հո՛ —: Յեվ
այդ վողջ ազմուկն արձագանքում եր անտառում:

Յերը քիչ — քիչ ամէն ինչ լռեց, մայր — գայլը
մի քիչ հանգստացավ և սկսեց նկատել, վոր իր վորսը,
չորը բռնել եր ատամներով և քաշ եր տալիս ձյան
վրայով, ավելի ծանր եր ու ավելի կոշտ, քան ընդհան-
րապես լինում են գառներն այդ ժամանակ: Յեվ նրանից
ուրիշ տեսակ հոտ եր գալիս, և ինչ վոր տարորինակ
ձայներ եյին լսվում:

մայր-գայլը կանգնեց և բեռը դրեց ձյան վրա, վոր
հանգստանա և սկսի ուտել, բայց հանկարծ զգվանքով
յետ ցատկեց: Դա վոչ թե գառնուկ եր, այլ շան լակոտ,
սև մեծ գլխով և յերկար վոռներով, խոշոր ցեղի
պատկանող, ճակատին ել մի մեծ սպիտակ խալ, ինչպի-
սին կար Արապկայի ճակատին: Դատելով շարժ ու ձե-
վից, դա մի կոպիտ, հասարակ բակապահ շնիկ եր: Ծը-
նիկը լիզեց իր տրորված, վերավորված մեջքը, պոչը
թափահարեց և սկսեց գայլի վրա հաջել:

Մայր — գայլը շան պես վոռնաց և փախավ



նրանից: Ծնիկն եւ նրա յեռեից: Մայր դայլը յեա դարձավ և ատամներով կրճտացրեց: Ծնիկը տարակուսանքով կանգ առավ և հավանորեն, վճռելով, վոր դայլը խաղում է իր հետ, յերկարացրեց դունչը ճմեռանոցի ուղղութեամբ և սկսեց ուրախ ու սրտազին հաջել, կարծես թե հրավիրելով իր մորը, Արապկային, խաղալու իր և մայր — դայլի հետ:

Արդեն լուսանում էր: Յեվ յերբ մայր—դայլն անցնում էր խիտ կաղամախի անտառով դեպի իր բունը, պարզ յերեվում էր ամեն մի ծառ և արդեն զարթնում է յին ցախաքլորները և հաճախ վեր ելին թռչում դեղեցիկ աքլորները, անհանդստացած շնիկի անդգույշ թռչքներից ու հաջոցից:

«Ինչու՞ է իմ յեռեից վազում, — մտածում էր մայր դայլը դայլութով: — Յերեվի, ուզում է վոր իրեն ուտեմ»:

Մայր — դայլը դայլուկների հետ ապրում էր մի փոսի մեջ: Յերեք տարի առաջ, խիտ փոթորկի ժամանակ, բարձր յեղեվնին արմատախել յեղավ, վորից գոյացավ այդ փոսը: Այժմ նրա հատակին հին տերևներ և մամուռ կային, հենց այդտեղ եւ թափթփված էյին վոսկրներ և յեղան պողեր, վորոնցով խաղում էյին դայլուկները: Նրանք արդեն արթնացել էյին և յերեքն էլ, վոր շատ նման էյին իրար, կանգնած էյին կողք կողքի, փոսի յեզերքին և նայելով վերադարձող մորը, պոչը շարժում էյին: Գայլուկներին տեսնելով, շնիկը կանգնեց մի քիչ հեռու և յերկար նայում էր նրանց: Նկատելով, վոր նրանք նույնպես ուշադրութեամբ նայում են իրան, սկսեց բարկացած հաջել նրանց, ինչպես ստարների վրա:

Արդեն լուսացավ և արևը ծագեց: Չյունն սկսեց փայլիլել: Ծնիկը շարունակ հեռու կանգնած, հաջում էր: Գայլուկները ծծում էյին իրենց մոր կաթը, թաթիկներով հրելով նրա դատարկ փորը, իսկ մայրն այդ ժամանակ ձիու սպիտակ ու չոր վոսկոր էր կրծում: Քաղցը նրան տանջում էր, գլուխը ցավեց շան հաջոցից,

ուղեց հարձակվել անկող հյուրի վրա և պատառոտել:

Վերջապես շնիկը հոգնեց և ձայնը խզվեց: Տեսնելով, վոր իրենից չեն վախենում, և նույնիսկ վրան ուշադրութուն չեն դարձնում, սկսեց վոչ համարձակ, յերբեմն պղպելով, յերբեմն ցատկոտելով, մոտենալ գայլուկներին: Այժմ, ցերեկվա լույսով, արդեն հեշտ եր նրան լավ դիտել: Նրա սպիտակ ճակատը մեծ եր, իսկ ճակատին կոշտիկ կար, ինչպիսին ունենում են շատ հիմար շներ: Աչքերը փոքր էին, յերկնագույն, անխալ, իսկ ամբողջ գնչի արտահայտութունը՝ արտակարգ հիմար: Մոտենալով գայլուկներին, նամեկնեց լայն թաթերը, գունչը դրեց նրանց վրա և սկսեց «Մըն՝ յա՛, մնյա՛... նհա՛, նհա՛, նհա՛...»

Գայլուկները վոչինչ չհասկացան, բայց պոչերը թափահարեցին: Այն ժամանակ շնիկը թաթով խփեց գայլուկներից մեկի մեծ գլխին: Գայլուկն ել թաթով նրա գլխին խփեց: Շնիկը կանգնեց կողքով դեպի գայլուկները և ծուռ — ծուռ նայեց նրանց, թափահարելով իր պոչը: Հետո հանկարծ տեղից պոկվեց և սառցածյան վրա մի քանի շրջան արավ: Գայլուկներն ընկան նրա յետեից: Շնիկն ընկավ մեջքի վրա ու վոտները ցցեց, իսկ նրանք յերեքով հարձակվեցին շնիկի վրա և հիացմունքից վնգստալով, սկսեցին կծել նրան, բայց վոչ թե ցավ պատճառելու համար, այլ կատակով: Ագռավները նստած էին բարձր սոճու վրա և նայելով նրանց կովին, շատ էին անհանգստանում: Սկավեց աղճուկ և ուրախութուն: Արևն այրում եր՝ արդեն, ինչպես զարնանը և աքլորները, վորոնք անընդհատ թռչկոտում էին փոթորկից ընկած սոճու վրայով, արևի փայլի տակ կարծես գմբուխտ յինեյին: Սովորաբար մայր — գայլերն իրենց ձագուկներին սովորեցնում են վորս անել, թույլ տալով խաղալ վորսի հետ և այժմ, տեսնելով, թե ինչպես գայլուկները վազում են սառցածյան վրայով շնիկի յետևից և կովում նրա հետ, մայր — գայլը մտածում եր. «Թող վարժվեն»:

Կուշտ խաղալուց հետո, գայլուկները զնային փոսը



և պառկեցին քնելու: Ծնիկը քաղցից մի քիչ վնդստաց, հետո նույնպես ձգվեց արևի տակ: Իսկ արթնանալով նորից սկսեցին խաղալ:

Ամբողջ որն ու յերեկոն մայր — գայլը վերհիշում էր, թե ինչպես անցյալ գիշեր գոմում էր մայրում դառնուկը և ինչպես էր բուրում վոչխարի կաթը: Ախորժակից նա ատամները չխչխկացնում էր և չէր դադարում ազահուլթյամբ հին վոսկորը կրծելուց, յերեակայելով, վոր դա դառնուկն է: Գայլուկները ծծում էին մոր կաթը, իսկ շնիկը սոված վազվզում էր և ձյունը հոտոտում:

«Արի, ուտեմ սրան...» — վորոշեց մայր — գայլը:

Մտաեցավ նրան: Ծնիկը լիզեց նրա դունչը և սկսեց վնդստալ կարծելով, վոր ուզում է խաղալ իր հետ: Կար ժամանակ, վոր նա չներ էր ուտում, բայց շնիկից մեծ շան հոտ էր պալիս, և վատառողջության հետեւյանքով, այլևս չէր տանում այդ հոտը: Նա զզվանքով հեռացավ:

Գիշերվա դեմ ցրտեց: Ծնիկը ձանձրացավ և դնաց առն:

Յերբ գայլուկները պինդ քնեցին, մայր — գայլը նորից վորսի դնաց:

Ինչպես և անցյալ գիշեր, նա անհանգստանում էր ամենափոքր շշուկից և նրան վախեցնում էին կոճղերը, փայտերը, առանձին գիհի մուլթ թփերը, վորոնք հեռվից մարդկանց էին նման: Նա վազում էր ճանապարհի մի կողմով, սառցածյան վրայով:

Հանկարծ բաղախան հեռու, ճանապարհի վրա, ինչ վոր մի մուլթ բան պեծին տվեց: Մայր — գայլը լարեց իր աչքերն ու ահանջները: Իսկապես առջևում ինչ վոր մի բան գնում էր և նույնիսկ լսելի էին համաչափ քայլեր: Չլինի՞ թե դորշուկ է: Նա զգուշությամբ, հաղիվ շնչելով, միշտ մի կողմով վազելով, անցավ մուլթ բիծը, յետ դարձավ նայեց վրան և ճանաչեց. դա սպիտակ ճակատով շնիկն էր, վոր հանդարտ քայլերով վերադառնում էր իր ձմեռանոցը:



«Չլինի թե նա ինձ նորից խանդարի», — մտածեց շայր գալը և արագութեամբ առաջ վազեց:

Բայց ձմեռանոցն արդեն մոտ էր: Մայր — գայլը ձյունահալույթի վրայով նորից դոմի կտուրը բարձրացավ: Յերեկվա անցքն արդեն ծածկված էր ծղոտով և կտուրի վրա յերկու նոր բարակ գերան էր դրված: Մայր գայլն սկսեց արագորեն աշխատել վտոքերով ու դնչով, յետ նայելով, վոր տեսնի, թե չի՞ գալիս արդե՞տք շնիկը: Բայց հազիվ նրա քթին դիպավ տաք գոլորշին և գոմադբի հոտը, վոր յետևից ուրախ և սրտազին հաջոց լավեց: Շնիկն էր վերադարձել: Նա ցատկեց մայր-գայլի մոտ, կտուրը, հետո անցքով վար ցատկեց և իրեն դդալով տանը, տաք տեղում, ճանաչելով իրենց վոչ-խարներին, սկսեց ավելի բարձր հաջել: Արապկան, վոր սրահի տակ էր, արթնացավ և զգալով գայլի ներկայութեանը, վոռնաց: Հավերը կչկչացին:

Յեվ յերբ պատշգամբի վրա յերեկաց Իզնատը իր միփողանին ձեռքին, վախեցած մայր — գայլն արդեն շատ հեռու էր ձմեռանոցից:

— Հյո՛ւյտ, — շվացրեց Իզնատը, — հյո՛ւյտ, քչիբ ինչքան ույժ ունես:

Նա քաշեց հրացանի շնիկը: Հրացանը վրիպեց: Քաշեց ելի մի անգամ՝ դարձյալ վրիպում: Քաշեց յերրորդ անգամ: Կրակե ահագին փունջ դուրս թուով հրացանի փողից և լավեց խլացուցիչ բու՛մ — բու՛մ: Հրացանն ուժեղ յետ տվեց նրա ուսին: Մի ձեռն առնելով հրացանը, իսկ մյուսը՝ կացինը, դնաց նայելու, թե ինչ աղմուկ է:

Քիչ հետո վերադարձավ խրճիթը.

— Ինչ՞ կա, — խռպոտ ձայնով հարցրեց ճանապարհորդը, վոր ռթեվանել էր նրա մոտ այդ դիշեր և արթնացել աղմուկից:

— Վոչի՛նչ... — պատասխանեց Իզնատը — դատարկ բան է: Սովորել է մեր սպիտակաճակատը քնել վոչէւարների հետ տաք տեղում: Միայն թե չի հասկանում, թե դձնով պետք է դուրս գալ և միշտ առիթ է

մնտուում կտուրով դուրս դալու: Մի քանի որ առաջ
դիշերը քանդել եր կտուրը և դնացել ման դալու:
Սրիկա': Իսկ այժմ վերադարձել ե և նորից կտուրը
ցիր ու ցան արել:

— Հիմա'ր:

— Այո', ուղեղի մի պտուտակը կոտորվել է: Մահու
չափ ատում եմ հիմարներին,—բարձրանալով վառա-
րանի վրա, հառաչեց Իգնատը: — դեհ, մարդ աստծո,
դեռ վաղ է. արի մի լավ քնենք:

Առավոտյան Իգնատը կանչեց իր մոտ սպիտակա-
ծակատին, քաչեց ու ցավացրեց ահանջները և հետո
ձիպոտով խրատելով, շարունակ կրկնեց.

— Դռնո'վ անցիր: Դռնո'վ անցիր: Դռնո'վ անցիր:




A ^{II} 24133



Հրատ. 4137. ԳԼ. լիազ. Ն— 9282 Պատվ. 874, Տիրաժ 4000
Հանձնված է արտադրության 20 հունիսի, 1937 թ.
Ստորագրված է տպելու 23 սեպտեմբերի, 1937 թ.
Թուղթ 62×94. Տպագրական 1 մամ. մեկ մա-
մուլում 30720. Նիշ հեղինակային 3/4 մամ.

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի, 65




1909

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0002302



22

A $\frac{\text{II}}{24133}$

ԳԻՆԸ 50 Կ.

054.

А. П. ЧЕХОВ

Белалобая

Гиз Арм ССР. Ереван, 1937 г

Երևան, 1940 թ